Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

Ընտանիքի վերամիավորում ԳԴՀ տարածքում ապրող ԵՄ կամ ԵՏՏ (Եվրոպական տնտեսական տարածք) քաղաքացիների հետ (ոչ ԳԴՀ քաղաքացիների)

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել: Հերթագրվել կարող եք միայն առցանց եղանակով: Առցանց հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքի միջոցով. www.eriwan.diplo.de :

Տեղեկություն

Սույն հուշաթերթիկը նախատեսված չէ ԳԴՀ քաղաքացու հետ միավորվելու համար: Փաստաթղթերը հավաքելիս խնդրում ենք առաջնորդվել համապատասխան հուշաթերթիկներով: Ստորև ներկայացվող տվյալները վերաբերում են նաև գրանցված միասեռ զուգընկերների միավորմանը: Ամուսնու հետ միավորման նպատակով վիզա կարող է տրամադրվել միայն այն դեպքում, եթե երկու ամուսինների 18 տարին էլ լրացել է: ԵՄ կամ ԵՏՏ քաղաքացու հետ ամուսնությունը գրանցելու նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ամուսնության գրանցելու վերաբերյալ հուշաթերթիկով: Այս դեպքում A1 մակարդակի գերմաներենի իմացության մասին վկայական ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

- Ոչ գերմանալեզու փաստաթղթերը՝ բացառությամբ անձնագրի տվյալների էջի, պետք է ներկայացնել գերմաներեն հաստատված թարգմանությամբ:
- Վկայականները և նմանատիպ փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և ապոստիլով/լեգալիզացիայով: Բնօրինակները կվերադարձվեն:
- Վիզայի համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի ԳԴՀ համապատասխան վայրի Օտարերկրացիների հարցերով մարմնի (Ausländerbehörde) համաձայնությունը: Վիզան կարող է տրվել միայն, երբ դեսպանությունը ստանա այս համաձայնությունները:
- **Դիմումի քննությունը և մշակումը սովորաբար տևում է 2-4 շաբաթ**, առանձին դեպքերում՝ ավելի երկար:
- Ավիատոմսի ամրագրում վիզայի համար չի պահանջվում, խնդրում ենք ավիատոմս ամրագրել միայն վիզա ստանալուց հետո:
- Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար: Ոչ լիարժեք փաստաթղթերը կարող են դանդաղեցնել գործընթացը և հանգեցնել դրանց վերադարձի կամ մերժման: Դեսպանություն ուղարկված այն ֆաքսերը կամ գրությունները, որոնց վրա բացակայում է վիզայի գործի համարը, չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին:
- **Խնդրում ենք դիմումի վերոնշյալ մշակման ժամանակահատվածում, ձեռնպահ մնալ դիմումի ընթացքի վերաբերյալ հարցումներ անելուց:** Այդ հարցումները էապես ծանրաբեռնում են վիզայի բաժնի աշխատանքը, այդ պատճառով վիզայի բաժինը չի կարող պատասխանել:
- Վիզայի վճարը կազմում է 75 եվրո, որը վճարվում է դրամով՝ դիմումը հանձնելիս:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Կոնտակտային ընթացիկ տվյալները, ինչպես նաև հեռախոսազանգերի ժամանակացույցը կարող եք գտնել կայքում.
https://eriwan.diplo.de/

- Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) պետք է **ներկայացնել A4 ձևաչափով**՝ առանց ամրացնելու, կարելու և թափանցիկ թղթապանակների:

Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և մեկական պատճենով: Խնդրում ենք փաստաթղթերը դասավորել այսպես.

- բոլոր բնօրինակ փաստաթղթերը՝ ստորև նշված հերթականությամբ.

- Դիմում-հարցաթերթիկը՝ հայտարարության հետ միասին, և բոլոր թվարկված փաստաթղթերի ընթեռնելի և ոչ մուգ պատճենները՝ ստորև նշված հերթականությամբ.

<u>Դիմումի համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.</u>

- գերմաներենով կամ անգլերենով <u>լիարժեք լրացված</u> դիմում-հարցաթերթիկ՝ ներառյալ Կացության մասին դաշնային օրենքի §54-ով սահմանված իրազեկումը: Հարցաթերթիկը կարող եք գտնել դեսպանության կայքում՝ սույն հղումով. https://videx-national.diplo.de ,
- լիարժեք լրացված և ստորագրված հայտարարություն հասանելիության (<u>հղում</u>) վերաբերյալ,
- 2 նոր, բիոմետրիկ լուսանկար, մեկը խնդրում ենք սոսնձել դիմում-հարցաթերթիկներին,
- գործող ճամփորդական անձնագիր, որը վավերական լինի առնվազն 6 ամիս, (անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ անձնագիրը տրված լինի ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ),
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, վիզա կամ որևէ այլ նշում,
- Ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ ՀՀ-ում կացության թույլտվություն
- Համատեղ կացության վերաբերյալ ազատ շարադրանքով հրավեր՝ Գերմանիայում բնակվող ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց, նաև ազատ շարադրանքով հայտարարություն, որ վերջինս ապահովում է Ձեր կենսական կարիքները
- Գերմանիայում բնակվող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու տեղեկանքը բնակության վայրից
- Գերմանիայում բնակվող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու ճամփորդական անձնագրի կամ անձնագրի տվյալների էջի պատճեն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, վերջինիս կացության թույլտվության պատճեն
- Գերմանիա միասին վերաբնակության մեկնելու դեպքում՝ վարձակալության մասին պայմանագիրը, սեփականության վկայականը կամ որևէ այլ վկայական՝ ապագա բնակության վայրի հասցեի նշումով
- եթե ԵՄ/ԵՏՏ քաղաքացին աշխատում է, ապա նրա աշխատանքային գործունեությունը հավաստող վկայական (օրինակ՝ գերմանական աշխատանքային պայմանագիր)
- եթե ԵՄ/ԵՏՏ քաղաքացին չի աշխատում, պետք է ներկայացնել
  - կացության բավարար միջոցների վերաբերյալ տեղեկանք, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանությամբ
  - առողջապահական ապահովագրության վկայական
- եթե Դուք ամուսնացած եք ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ,
  - ամուսնության վկայական (ուշադրություն. դանիական ամուսնության վկայականը նույնպես պետք է ունենա ապոստիլ)
  - նախկին ամուսնությունների դեպքում՝ բոլոր նախկին ամուսնական վկայականներ, մահվան կամ բաժանության վկայականներ, բաժանության՝ իրավական ուժի վերաբերյալ նշումով վճիռները, անվանափոխության վերաբերյալ տեղեկանքներ

- եթե Դուք վայրընթաց գծով բարեկամ եք և Ձեր 21 տարին դեռ չի լրացել,
  - ապացույցներ ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց սերելու վերաբերյալ՝ վկայականի տեսքով (օրինակ՝ ծնողների կամ ծնողներից մեկի՝ ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ ամուսնության վկայականը, ծննդյան վկայականը)
- եթե Դուք վերընթաց կամ վայրընթաց գծով բարեկամ եք, որին հատկացվում է ալիմենտ,
  - ապացույցներ ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց սերելու վերաբերյալ՝ վկայականի տեսքով (օր.՝ ծնողների կամ ծնողներից մեկի՝ ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ ամուսնության վկայականը, ինչպես նաև ծննդյան վկայականը)
  - ապացույց ալիմենտի տրամադրման վերաբերյալ (օր.՝ տեղեկանք ֆինանսական հաստատությունից)
- ամուսնու/ գրանցված կողակցի կամ երեխայի՝ Գերմանիայի տարածքում բուհական ուսումն ավարտող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ միավորման դեպքում՝
  - ապացույցներ ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց սերվելու վերաբերյալ՝ վկայականի տեսքով (օր.՝ ամուսնության վկայական, ծննդյան վկայական)
  - ԵՄ/ԵՏՏ քաղաքացու ուսանողական վկայականը
  - ալիմենտի հատկացման վերաբերյալ ապացույց (օր.՝ տեղեկանք ֆինանսական հաստատությունից)
  - կացության բավարար միջոցների վերաբերյալ ապացույց
  - առողջապահական ապահովագրության վկայական
- անհրաժեշտության դեպքում հավելյալ ապացույցներ և ճամփորդական-առողջապահական ապահովագրություն (դիմումի դրական ընթացքի դեպքում պետք է վիզան ստանալուց առաջ ներկայացնել ապացույց առկա ճամփորդական-առողջապահական ապահովագրության մասին, եթե այն արդեն կանխավ ներկայացված չի եղել):

<u>Կարևոր ցուցումներ</u>

Ալիմենտի տրամադրման նախապայմանը Աշխատուժի ազատ տեղափոխման օրենքի շրջանակում ենթադրում է ընտանիքի անդամին մատուցվող ծառայություն, որը վերջինիս կողմից օգտագործվում է հիմնական կարիքները ծագման երկրում հոգալու նպատակով: Վիզայի ընթացակարգում անհրաժեշտ է գրավոր ապացույց ներկայացնել ալիմենտի փաստացի հատկացումների վերաբերյալ, օրինակ՝ ֆինանսական հաստատության կողմից տրված տեղեկանքի տեսքով: Ընտանիքի անդամի կամ ԵՄ քաղաքացու սովորական հայտարարությունը, որով, օրինակ, հավաստվում է, որ աջակցությունն իրականացվել է և կշարունակվի տրամադրվել, առանց լրացուցիչ ապացույցի չի կարող բավարար լինել:

Դեսպանությունը հուշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82–ի՝ յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, եթե որևէ փաստաթուղթ բացակայում է, դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

Ուշադրություն.

Դեսպանությունը չի համագործակցում **որևէ ճամփորդական գրասենյակի** հետ: Նույնը վերաբերում է դեսպանության անմիջական հարևանությամբ **ծառայություններ** մատուցող գրասենյակներին: Ճամփորդական և ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումները, թե համագործակցում են դեսպանության հետ, չեն համապատասխանում իրականությանը:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Ձեր դիմումի հաջողությունը կախված չէ **որևէ մեկից**. դիմումների վերաբերյալ որոշում կայացնում է բացառապես գերմանական անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, խաբում են Ձեզ. ոչ մի պարագայում գումար մի վճարեք:**

Վիզաների վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ կարող եք ստանալ դեսպանության **վիզայի բաժնի աշխատակիցներից**՝ անվճար հիմունքներով: Տեղեկություններ տրամադրելու իրավունք այլ անձինք չունեն:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Կոնտակտային ընթացիկ տվյալները, ինչպես նաև հեռախոսազանգերի ժամանակացույցը կարող եք գտնել կայքում.
https://eriwan.diplo.de/